



անել: Այս շա՛տ է տանջում ինձ, և ոչ մի վճիռ դեռ չեմ կայացրել իմ նկատմամբ, իսկ այնքա՛ն եմ տանջվել, այնքա՛ն ժամանակ եմ կորցրել՝ և որը պետք է նորից վերականգնել, կորուստը փրկել, ուղղվել... Բայց ինչպե՞ս... Արդյո՞ք հնար ունիմ լոկ միջոց տնտեսական, նորից գնալու Եվրոպա՝ շարունակելու ուումս, քանի դեռ երիտասարդ եմ. իսկ եթե չկարողացա գնալ, ի՞նչ անեմ այստեղ Կովկասում, ուր ո՛չ մի կյանք, հոգեկան շահեր չկան...

Հայ ժողովրդի մեջ, վերջին դժբախտ անցքերի շնորհիվ, շնորհիվ, տիրում է մի դառն հիասթափումն՝ դեպի գրականությունը, մամուլը, միտքը, հասարակական կյանքը. այժմ ամենքը, թե՛ ինտելիգենտը, և թե՛ ժողովուրդը միայն իրենց տնտեսական շահերովն են կլանված և ընտանիքի մեջ ամփոփված: Գրողի, մտածողի համար այստեղ օդ չկա... Իսկ մեր հայ գրողները... խեղճները... հացի խնդիր, դառն կարիք, ժողովրդի անտարբերությունը, կառավարության ճնշումներ, հալածանք... Ուղիղն ասած՝ ուժ չկա ապրելու... Ի՞նչ անել այստեղ. - Հայ դպրոցները փակ, գրադարան-ընթերցարանները փակ. գրականությունը ճնշված՝ ինչո՞վ ոգևորվել. - ժողովողո՞վ, ժողովուրդը ծաղրում է ազգությունը» և շա՛տ ստոր մակերևույթի վրա է նրա հոգու աշխարհը... Այս բոլորին կան նպաստող, սիստեմատիկ հանգամանքներ-պայմաններ, հասկանալի են, որ արվեստական և բարձրից նյութած որոշ քաղաքական գործունեության պտուղ: Ի՞նչ անել այստեղ... այս հարցը ինձ բոլորովին ջլատում է, և ես հիմա շա՛տ հուսահատված եմ և կորած թե՛ ինձ, և թե՛ ուրիշների համար...

Երևի Դուք կպատասխանեք «ի՞նչ անելուն»՝ «գրել-գրեցեք»... Բայց հոգի չկա գրելու, խանդ, պաֆոս - ոչի՞նչ չկա... Իսկ տեղական միջավա՞յրը... Օ, Դուք չեք կարող երևակայել այստեղ...

Ահա՛ դրանք են պատճառները, որ ես մինչև այժմ անտարբեր եմ գտնվել Ձեր թերթին, սա շա՛տ դատապարտելի է իմ կողմից, բայց ի՞նչ անեմ, ուղիղն ասած՝ կարեկցության արժանի եմ դարձել, դիմում եմ այնտեղի հարուստներին բաժանորդ գրվել մեր թերթերին, լրագրներին՝ ծաղրում են լրաբաբար... այդքան անտարբեր են. դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ «Մուրճը» մեր ողջ քաղաքում միայն 2 բաժանորդ ունի. 2 հա՛տ միայն, իսկ «Անահիտը»՝ երևի միայն քաղաքի կյուրը (ակումբը). և գիտե՞ք, մեր քաղաքը Կովկասի ամենաբազմամարդ հայաբնակ քաղաքն է՝ զու՛տ հայերով, 30 000 բնակիչ, շրջապատված 200 հայ բազմամարդ գյուղերով և այդքան խիտ ազգաբնակչության մեջ, հազիվ մի տասը ինտելիգենտ-կրթված անհատներ գրտ-

նրվին. մեր երիտասարդությունը, հին ուսուցիչները - բոլորը, այժմ Բարու քաղաքումն էն, նավթի աշխարհում, ուր շահ ունեն:

Երկար եղավ նամակս, և Ձեզ, երևի. ձանձրալի, մանավանդ– որ անձանքներ ենք, բայց ոչ՝ վաղուց ծանոթներ ենք և ահա թե ինչո՞ւ կամա-ակամա սիրտս բացեցի Ձեր առաջ՝, բարեկամս: Է՛յ, դառն են մեր հայրենիքի պայմանները. օրհասի մեջն ենք, և հազիվ կարող ենք օդ շնչել. երանի՛ Ձեզ, որ ապրում եք մտ՛քի աշխարհում, լուսավոր մարդկանց մեջ, և Միգլեիչի նման երագում եք հարազատ ժողովրդի վերածնությունը, երանի՛ Ձեզ, որ ընդունակ եք զգալու, խորհելու, և տանջվելու... Ես այստեղ անպատճառ կքարանամ և կլինեմ ամբոխի հարազատ որդին – քարե - գանգ, քարե-գանգ, որ ձայն չունի, համր է, մեռած, և չի կարող դողանջել վեհություն ու գաղափար...

Ընդունեցեք խորին հարգանքս, Ձեզ համակրող Ավետիք Իսահակյանց.

Հ. Գ. Սպասում եմ Ձեր նամակին, մոտս չունեմ իմ հրատարակած գրքից՝ «Երգեր ու վերքեր», որ դրկեմ, հետո կուղարկեմ անպատճառ: «Անահիտի» չորրորդ համարը չէ ստացվել մեզանում, երևի ցենզուրան է գրավել:

Խնդրում եմ շուտով պատասխանեք նամակիս՝ ի՛նչ որ ուզեցել էիք ասել կորած նամակով և ի՛նչ որ հիմա կուզեք:

Ձեր Ավ. Իսահակյանց

Հասցե՝ - Кавказ, город Александрополь (Эриванская губерния). Аветик Исаакян Генеральская улица